ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ------- 2023 թվականի №---Ա

քաղ. Երևան

«ՅՈՒՔՈՄ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԳՈՐԾԱՐՔԻ ԿՆՔՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «ՅՈՒՔՈՄ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2023 թվականի հոկտեմբերի 3-ի №1008 գրությամբ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) է ներկայացրել Ընկերության նկատմամբ հսկողության փոխանցումը համաձայնեցնելու հայտ (այսուհետ՝ Հայտ), որի համաձայն՝ «Այյու Թելեքոմյունիքեյթիդ Լիմիթեդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող՝ Ընկերության 29.093068%, Գուրգեն Գագիկի Խաչատրյանին պատկանող՝ Ընկերության 11.908948%, Արտյոմ Գագիկի Խաչատրյանին պատկանող՝ Ընկերության 11.908948%, ինչպես նաև Արամ Սուրենի Խաչատրյանին պատկանող՝ Ընկերության 24.342602% բաժնետոմսերը գրավադրվելու են «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության օգտին,

բ) «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանն ուղղված Հանձնաժողովի 2023 թվականի հոկտեմբերի 3-ի №ԳԲ/34.2-Մ2-4/3769-2023 գրությանն ի պատասխան վերջինս նույն թվականի հոկտեմբերի 20-ի №01/11.1/9981-2023 գրությամբ հայտնել է, որ Հայտի վերաբերյալ իր իրավասությունների շրջանակում առարկություններ չունի՝ գրությանը կից ներկայացնելով Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության դիրքորոշումը, որի համաձայն՝ վերջինս Ընկերության շուրջ 78 տոկոս բաժնետոմսերը «Արդշինբանկ» փակ բաժնետոմսերը ընկերությունում գրավադրելու միջնորդության առնչությամբ առարկություններ չունի,

գ) ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ գործարքի կնքման համաձայնեցման մերժման հիմքերը բացակայում են, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 14-րդ հոդվածը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հանձնաժողովի 2022 թվականի փետրվարի 9-ի №56-Ն որոշումը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ «Այյու Թելեքոմյունիքեյթիդ Լիմիթեդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող՝ Ընկերության 29.093068%, Գուրգեն Գագիկի Խաչատրյանին պատկանող՝ Ընկերության 11.908948%, Արտյոմ Գագիկի Խաչատրյանին պատկանող՝ Ընկերության 11.908948%, ինչպես նաև Արամ Սուրենի Խաչատրյանին պատկանող՝ Ընկերության 24.342602% բաժնետոմսերը «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության օգտին գրավադրելու գործարքի կնքմանը:
2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված գործարքի կնքման ժամկետը չի կարող գերազանցել սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեց ամիսը:
3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետում նշված գործարքի կնքումից հետո երկշաբաթյա ժամկետում անհրաժեշտ է Հանձնաժողով ներկայացնել համապատասխան պայմանագրի (պայմանագրերի) պատճենը:
4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- ---------- 2023թ.